

**ԲԱԺԻՆ 6: ՀԱՅ ԴՊՐՈՑԻ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՄՏՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ**  
**РАЗДЕЛ 6: ИСТОРИЯ АРМЯНСКОЙ ШКОЛЫ И ПЕДАГОГИЧЕСКОЙ МЫСЛИ**  
**SECTION 6: HISTORY OF ARMENIAN SCHOOL AND PEDAGOGICAL THOUGHT**

UDC 37(09)(479.25) + 37.017  
DOI 10.46991/educ-21st-century.v6.i1.160

**ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԿՁԲՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ**  
**ԸՍՏ ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ «ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՏԻԳՐԱՆԻ ԿԱՄ**  
**ԲԱՐՈՑԱԿԱՆ ԽՐԱՏՆԵՐ ՀԱՅ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ» ՎԵՊԻ**

**Բեքմեզյան Աստղիկ**  
*բան. գիտ. թեկնածու, դոցենտ*  
*Երևանի պետական համալսարան,*  
*Հայաստանի Հանրապետություն*  
*a.bekmezyan@ysu.am*  
<https://orcid.org/0009-0001-6432-6718>

**Անփոփում**

**Համառոտ ներածական:** Հոդվածում քննության առարկա է կրթության ոլորտում մասնավորապես ձևավորվող անձի, կրթության համակարգում կարևոր դաստիարակչական հարցադրումների, դասավանդման, ավանդական և ժամանակակից մեթոդների, ժառանգորդականության խնդիրը: Մանկավարժության պատմության մեջ այնպիսի ոլորտներ, ինչպիսիք են բարոյական նորմերի, հոգևոր արժեքների ձևավորման, ինքնակառավարման մեխանիզմի կարգավորման, ընտանեկան և հասարակական սուբորդինացիայի, գեղագիտական ընկալման, մշակութաբանական աշխարհընկալման շերտերը, միշտ էլ եղել են ուշադրության կենտրոնում: Կարևորվում է այն հանգամանքը, որ մարդկության պատմության մեջ քաղաքակրթական յուրաքանչյուր ժամանակաշրջանի արժեքային համակարգը նախևառաջ ձևավորվում և իմաստավորվում է տվյալ դարաշրջանի գիտական ու գեղագիտական ժառանգությամբ: Հաճախ անցյալի մանկավարժական փորձը ներկայի ամենաարդիական մոտեցումների հիմքն է ներկայանում: Լավագույն օրինակներից է Խ. Աբովյանի իր գրական-մանկավարժական ժառանգությամբ ընդհանրապես և «Պատմություն Տիգրանի կամ բարոյական խրատներ հայ մանուկների համար» ստեղծագործությամբ մասնավորապես: Այս ստեղծագործությունը, որ իր ժանրային պատկանելությամբ վեպ է, 19-րդ դարում գրված եզակի գիտամանկավարժական սկզբունքների ժողովածու-շտեմարան է, որը միշտ արդիական է և հանձնարարելի է թե՛ մանուկներին, թե՛ ծնողներին և թե՛ մասնավորապես ուսուցիչ-դաստիարակ-մանկավարժներին՝ որպես ուսանելի կանոնների համակարգ կրթության ոլորտում կիրառելու նպատակով: «Պատմություն Տիգրանի կամ բարոյական խրատներ հայ մանուկների համար» վեպ-մանկավարժական տրակտատի ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռում նորովի ընկալելու և գնահատելու նաև ժամանակակից գիտամանկավարժության սկզբունքները և փորձարարական նորարարությունների համակարգը:

**Բանալի բառեր՝** *կրթություն, դաստիարակություն, մանկավարժական նորամուծություններ, Խ. Աբովյան, վեպ-տրակտատ, խրատ և խորհուրդ, նյութական արժեք, հոգևոր արժեք, ընտանեկան սուբորդինացիա, անձի ձևավորում:*

**Հիմնախնդրին առնչվող հետազոտությունների ուսումնասիրությունը** թույլ է տալիս եզրակացնել, որ դարեր շարունակ՝ անտիկ ժամանակաշրջանից մինչև մեր օրերը, հայ մանկավարժության պատմության մեջ Խ. Աբովյանից մինչև արդի գիտամանկավարժական հետազոտական գործառնությունների համակարգ, գիտնականների ուսումնա-

սիրությունների կարևոր ոլորտներից է դաստիարակության, կրթության նոր մեթոդաբանական շերտերի վերհանումը կրթության, դասավանդման, հասարակության հոգևոր-բարոյական ստանդարտների ձևավորման առումով:

**Հողվածի շրջանակում իրականացվող հետազոտության նպատակն է** ժամանակակից գիտական, նոր մեթոդաբանական տեսանկյունների համադրումն ու գույքահեռումը երկու դար առաջ կիրառվող մեթոդաբանական սկզբունքների հետ՝ հանձին Խ. Աբովյանի գիտամանկավարժական ժառանգության, դրանց փոխկապակցության, ժամանակակից դասավանդման մեխանիզմների վերհանումը:

**Հետազոտության նորույթը:** Հողվածը միաված է բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսուցման գործընթացներում ուշագրավ և հետաքրքրական դարձնելու մարդու ու անձի ձևավորման, կայացման հետ կապված այնպիսի առարկաների դասավանդումը, որոնք ընկալվում են արդիական, սակայն ունեն նաև անցյալի մեծ փորձ, և այս գործընթացում վեր հանել նաև անցյալի ու ներկա գիտությունների ժառանգորդական կապը, որով ավելի է կարևորվում ժամանակակից գիտական և տեխնիկական հնարավորությունների ներմուծումը գիտամանկավարժական հետազոտությունների դաշտ:

**Հիմնական նյութի շարադրանքը:** Կրթության, դաստիարակության, մարդու՝ որպես անձի կայացման գործընթացի համակարգում դարեր շարունակ էական է եղել խնդիրը լուծելու, խնդիրն իրականացնելու մեխանիզմի թե՛ տրամաբանական, թե՛ գիտական, թե՛ մանկավարժական մոտեցումների օպտիմալ, արդյունավետ մեխանիզմների կառուցումը: Կարևորելով պետության կայացման համար կրթության և դաստիարակության որակը և բազմաթիվ օրինակներով հիմնավորելով այդ ոլորտի տարբեր շերտերի առանձնահատկությունների իմացություններին տիրապետելը՝ Պլատոնը իր «Պետություն» աշխատության մեջ նշում է. «Բավական է տալ առաջին խթանը պետական կարգին, ու այն առաջ կշարժվի ինքնաբերաբար՝ արագություն հավաքելով, ինչպես անիվը: Քանի որ ճիշտ կրթությունն ու դաստիարակությունը մարդու մեջ արթնացնում են բնական լավ հակումները, իսկ ում մոտ դրանք արդեն կային, նման դաստիարակության շնորհիվ դրանք դառնում են ավելի լավը, և ընդհանրապես, սեփական սերունդներին փոխանցելու իմաստով ևս, որ առկա է բոլոր կենդանի արարածների մոտ» [6, 15 212]: Պատահական չէ, որ դարեր շարունակ գրվել են գիտական, մանկավարժական բազմաթիվ աշխատություններ, որոնց նպատակը եղել է հնարավորինս նորովի, ինքնատիպ և գործուն մեթոդներ մշակել այս ասպարեզում: Բոլոր ժամանակների մեծ փիլիսոփաները ունեցել են իրենց դպրոցները, որտեղ, բացի ընդհանուր առմամբ գիտելիքից, դասավանդվել են և փոխանցվել իմացություններ բարու, բարոյականի, ազնիվի, մարդկային այլ ներկայանալիությունների մասին (հիշենք սոկրատյան, արիստոտելյան, հեգելյան, ռուսսոյական, արովյանական կրթական համակարգերը և դասավանդման նրանց սկզբունքները):

Հայ մշակութաբանության և մանկավարժական մտքի պատմությունների մեջ նույնպես այս խնդիրը բազմաձև դրսևորումներ է ունեցել, որոնց շարքում իր ուրույն և անփոխարինելի տեղն ունի 19-րդ դարի հայ մեծագույն մտածող, հայ նոր գրականության հիմնադիր, հայ մանկավարժության պատմության եզակի հեղինակներից Խ. Աբովյանը: Նրա «Նախաշավիղը», «Քերականությունը», «Պատմություն հին դարուցը», «Վասն մտավարժություն մանկանցը» և բազում այլ դասագրքեր սրա վկայությունն են: Խ. Աբովյանի մանկավարժական գործունեության և այս ոլորտում թողած գիտական աշխատությունների մեջ առանձնանում է «Պատմություն Տիգրանի կամ բարոյական

խրատներ հայ մանուկների համար» անավարտ վեպը, որը մի ուրույն գիտամանկավարժական հանրագիտարան է իր կառուցով, կրթական մեխանիզմի ինքնատիպությամբ, հարցադրումների առայսօր արդիականությամբ: Ի տարբերություն իր մյուս մանկավարժական բնույթ ունեցող աշխատությունների՝ այստեղ հեղինակը գեղարվեստական տեքստի հնարավորությունները դարձնում է դիդակտիկ, գործնական օրինակի հիման վրա կառուցվող շարադրանք, պատմություն, որտեղ յուրաքանչյուր դրվագ ձեռք է բերում կա՛մ խաղ-դասի, կա՛մ խաղ-բեմադրման, կա՛մ խաղ-բանավեճի հատկանիշներ, որոնցով էլ հեղինակը լուծում է իր հերթական գիտամանկավարժական գործունեության փոխկապակցվածության խնդիրը: Ինչպես իրավացիորեն նշում է գեղագետ Յուրի Բորևը, «արվեստը մարդկանց լուսավորության (փաստերի փորձի հաղորդում) և կրթության (մտածողության փորձի և ունակությունների, ընդհանրացման, փաստերի վերաբերյալ հայացքների համակարգի հաղորդում) միջոց է: Այն հանդես է գալիս որպես «կյանքի դասագիրք» [2, էջ 173]: Գրականության ուսուցողական ֆունկցիայի մասին ուշագրավ դիտարկում են կատարում նաև գրականության տեսաբաններ Ռոբնե Ուոլլեթը և Օսթին Ուորենը. «Այն տեսակետը, որ պոեզիան հաճույք է (նման ցանկացած այլ հաճույքի), պատասխանում է այն տեսակետին, որ պոեզիան ուսուցանում է (ինչպես ցանկացած դասագիրք)...» [5, էջ 34], այնուհետև լրացնում են այս միտքը կարևոր մի հավելմամբ. «Երբ գրական երկը գործում է հաջողությամբ, ապա հաճույքի և օգտակարության «հատկանիշները» ոչ թե պարզապես գոյակցում են, այլ սերտաձուլ: Անհրաժեշտ է պնդել, որ գրականության պարզևած հաճույքը սովորական ձևով չի առանձնանում հաճույքի մյուս հնարավոր տեսակներից, այլ դա իրապես «բարձրագույն հաճույք է», քանի որ տրվում է առավել բարձրակարգ գործունեությամբ, որ անշահ հայեցողությունն է: Եվ գրականության բերած օգուտը՝ նրա լրջությունը, ուսուցողականությունը, հաճույք պատճառող լրջություն է, այսինքն՝ ոչ թե պարտքի լրջություն, որը պետք է կատարել, կամ ոչ թե դասի, որը պետք է յուրացնել, այլ էսթետիկական լրջություն, ընկալման լրջություն» [5, էջ 36]: Ըստ էության, այս սկզբունքով են առաջնորդվել անցյալ դարերի նշանավոր մանկավարժ գեղագետները, ինչպիսիք են Ժան-ժակ Ռուսոն, Խ. Աբովյանը, որոնք իրենց գուտ մանկավարժական աշխատությունների հետ գուգահեռ ստեղծել են գեղարվեստական ստեղծագործություններ՝ գիտամանկավարժական ընդգծված շեշտադրումներով՝ նպատակ հետապնդելով գեղարվեստական գրականության հնարավորությունների միջոցով ևս հասնելու կրթադաստիարակչական արդյունքի:

Արվեստի, գրականության և գեղարվեստական տեքստի ուսուցողականության փոխհարաբերության խնդրին անդրադառնալու վերոնշյալ տեսանկյունը լավագույնս դրսևորվում է Աբովյանի՝ քննության առարկա վեպի վերլուծության ժամանակ:

Նախքան բուն խնդրի մեկնաբանությանն անցնելը անդրադառնանք Խ. Աբովյանի մի ձևակերպմանը, որ բանալի կառույց է մեր հետագա վերլուծությունների համար. խոսքը վերաբերում է «խրատ» բառի իմաստաբանական, այս պարագայում խիստ կարևոր նրբերանգին: Փաստն այն է, որ շատ հաճախ «խրատ» և «խորհուրդ» բառերը համարյա նույնականացվում են, անգամ դրանք դիտարկվում են որպես հոմանիշներ [4, էջեր 274 և 277]: Մակայն իմաստաբանական տեսանկյունից «խորհուրդ» որևէ մեկի կողմից իր անձնական կյանքի փորձի հիման վրա իր համար ընդունելի կանոնների փոխանցման առաջարկությունն է դիմացինին առանց պարտադրանքի, իսկ «խրատը» տվյալ հասարակության, ժողովրդի՝ դարեր շարունակ կուտակված փորձառության ընդհանրացումն է, որ երբեմն թևավոր խոսքի, առակի մակարդակ է ձեռք բերում և փոխանց-

վում է սերնդեսերունդ՝ որպես ժողովրդական իմաստություն, դաստիարակության, կյանքի ճանաչողության հանձնարարական. ի վերջո խորհուրդ կարելի է տալ թե՛ մեծին, թե՛ փոքրին, իսկ խրատ՝ միայն փոքրին, չձևավորված, չկայացած մանուկին, աճող սերնդին: Եվ նաև խորհուրդ կարող է իրեն թույլ տալ տալ ցանկացած մարդ, սակայն խրատատու կարող է լինել հեղինակությունը, փորձառություն ձեռք բերած մեկը: Խ. Աբովյանը, իր այս երկում ներմուծելով «խրատներ հայ մանուկների համար» կոնկրետացումը, նպատակ է հետապնդել խստացնելու իր գրության դաստիարակչական, մանկավարժական, խրատաբանական ուղղվածությունը, որը շարադրման ընթացքում բազմիցս հիմնավորվում է հատկապես խրատի՝ խրատվողին հասցնելու բացառիկ ինքնատիպ տեխնիկայով:

Ժամանակակից գիտամանկավարժական պրակտիկան, ուսուցման գործընթացը ավելի դյուրամարս դարձնելու, ուսուցման գործընթացն առավել հետաքրքիր, աշխույժ կազմակերպելու նպատակով դիմում է խաղային, բանավիճային, կողմ և դեմ մտքերի համակցման տեխնոլոգիաներին, սակայն դեռևս երկու դար առաջ, ի դեմս Խ. Աբովյանի այս վեպի, մենք առնչվում ենք դասավանդման արդի նորամուծությունների ուշագրավ կիրառումներին, որոնց հարկ է անդրադառնալ ըստ որոշակի ոլորտների:

Նախ հարցադրումների ինչ տիրույթներ է ընդգրկում մանկավարժության պատմության մեջ առանձնահատուկ տեղ զբաղեցնող այս վեպ-խրատների հավաքածու դաստիարակչական տրակտատը: Եթե միայն վիպական նարատիվի տրամաբանությամբ, առաջընթացի հերթականությամբ թվարկենք այն խրատ-հանձնարարականները, որոնց պատկերմամբ ծավալվում է վեպը, կունենանք հետևյալ պատկերը.

Բարություն արա՛, դեմդ կգա:

Ցայտնտտի մեջ մի՛ ընկիր:

Գո՛հ եղիր արածիդ արդյունքից:

Թափթփվածությունը խրախուսելի չէ:

Կարգ ու կանոնը երջանկություն է:

Շնորհակալ լինելը մեծ շնորհ է:

Պետք է ուրախ դիմագրավել դժվարությունները:

Ընտանի կենդանիների նկատմամբ ուշադրություն դրսևորելը պարտադիր է:

Լավ ծնող և լավ վարժապետ ունենալը մեծ բախտավորություն է:

Ծնողներին հարկ է գերադասել բոլորից:

Պետք է անձնագոհ լինել, սեփական հաճույքը պետք է կարողանալ ստորադասել:

Հայր-գավակ փոխադարձ հարգանքը միշտ ճշմարիտ է:

Համբերության դաստիարակում:

Չափի, անգամ ուրախության պարագայում չափի զգացողությունը գերադասելի է:

Բարկությունը պետք է զսպել:

Հոգևոր սնունդը նախընտրելի է:

Օրինակի ուժը:

Թերությունը երեսով չտալ:

Վնասը պետք է կոնկրետ փոխհատուցել:

Ուրիշի ունեցածի վրա աչք չունենալ:

Ծուլությունը, շատակերությունը, որկրամոլությունը ընդունելի չեն:

Այլասիրությունը գնահատելի է:

Որոշումը իրականացնելու հաստատակամություն պետք է ունենալ:

Մոտիպապաշտությունը դատապարտելի է:

Ուսման ժամանակ կարևոր են երևակայությունը, կրկնությունը:

Թույլի, անպաշտպանի վրա չի կարելի ծիծաղել:

Ենթադրելով կարծիք կազմելը սխալ է:

Վատ օրինակը պիտի պատժվի:

Մեծի խոսքը կարևոր է:

Աշխատասիրությունը յուրաքանչյուր ձեռնարկման հաջողության նախապայմանն է:

Միտումնավոր ըստ հերթականության և առանձին-առանձին ներկայացնելով վեպում առաջ քաշված դաստիարակչական խրատ-հանձնարարականները՝ մենք փորձեցինք ավելի շեշտված վեր հանել բոլոր այն կարևոր խնդիրները, որոնց վիպական-գեղարվեստական լուծման համար է հեղինակը ստեղծել իր երկը: Ընդ որում՝ նախ խրատների վերոնշյալ հերթագայությամբ են ծավալվում և զարգանում վեպի այսօրեն ու թեմայի տրամաբանությունը. եթե ուշադիր հետևենք, ստեղծագործությունը սկսվում է բարության, լավություն անելու և դրա վերադառնալու հատկության իմաստավորմամբ, հետո աստիճանաբար ձևավորվում են կենցաղային, բարոյական, հոգեբանական, իմացական, ճանաչողական խրատները, իսկ ամենավերջում այս համակարգը ամբողջանում է աշխատասիրության կարևորմամբ: Վեպը, ցավոք, անավարտ է, սակայն այն վիճակում էլ, որ մեզ է հասել, միանգամայն արդարացնում է խրատ-հանձնարարականների զարգացման այս տրամաբանությունը՝ բարությունից մինչև աշխատասիրության արժեքավորում, ապա՝ այս խրատ-հանձնարարականներից և ոչ մեկը վեպում չի ներկայացվում մերկապարանոց, միայն որպես դաստիարակչական պարտադրանք: Վիպասանը նախ ներկայացնում է մի ընտանիք, որտեղ տիրում էին խաղաղությունն ու հարաբերությունների ներդաշնակությունը, ապա նկարագրություն առ նկարագրություն տեղի են ունենում դեպքեր, այցելում են տարբեր մարդիկ, ձևավորվում են երկխոսություններ, հարաբերություններ, որոնց ընթացքում և որոնց միջոցով ընթերցողը եզրակացություններ է անում, ընդհանրացումներ է կատարում, որոնք հենց դառնում են խրատների այն համակարգը, որ ներկայացրինք վերը:

Եթե անձի ձևավորման, կրթման տրամաբանությամբ մոտենանք վեպում արծարծվող խնդիրներին, կունենանք հարցադրումների հետևյալ տիրույթը.

*բարոյական նորմերի իմացություն* (բարություն արա, դա կվերադարձվի քեզ համար անակնկալ, բայց քեզ անհրաժեշտ մի ժամանակ, շնորհակալ լինելը մեծ բարեբախտություն է, հարկ է ուրախ դիմագրավել դժվարությունները, անձնագոհությունը մեծ շնորհ է, և անձնական, սեփական հաճույքը պետք է կարողանալ ստորադասել ընդհանուրի անհրաժեշտությանը, հոգևոր սնունդը միշտ գերադասելի է, ուրիշի ունեցածի վրա չպետք է աչք ունենալ և այլն),

*անձի ինքնակատարելագործում* (գո՛հ եղիր աշխատանքիդ արդյունքից, ցայտնոտի մեջ մի՛ ընկիր, օրինակի ուժը զորավոր է, ծուլությունը, որկրամոլությունը պետք է հաղթահարել, երևակայությունը, կրկնությունը արժեքավոր են ինքնակատարելագործման ժամանակ, աշխատասիրության կարևորությունը, և այլն),

*ընտանեկան, հասարակական սուբորդինացիայի դաստիարակում* (ծնող, ուսուցիչ, հայր-գավակ փոխադարձության կանոնները, չափի զգացողության դաստիարակում, մեծի խոսքի գիտակցում և այլն),

*գոյության և կեցության հանձնարարելի պայմանների ճանաչողություն* (կարգ ու կանոնը երջանկության նախապայմաններ են, թափօփվածությունը, վատ օրինակը, թերությունը երեսով տալը խրախուսելի չեն, և այսպես շարունակ):

Վեպը վերոնշյալ և բազում այլ գիտամանկավարժական սկզբունքների շտեմարան է, սակայն դաստիարակության, մարդու անձի ձևավորման խնդիրը հեղինակը լուծում է կոնկրետ օրինակների միջոցով, ընդ որում՝ ոչ թե «այ էթե այսպես վարվես, այսպես կստացվի» սկզբունքով, այլ ընդգծված առարկայական ֆաբուլայի մեջ: Օրինակ՝ վեպն սկսվում է Տիգրանի ընտանիքի առօրյայի նկարագրությամբ, երբ հայրը աշխատանքից վերադառնում է տուն, կինը, երեխաները սիրով դիմավորում են նրան, յուրաքանչյուրն իր հետաքրքրությունների և կարողությունների սահմաններում կազմակերպում է ընտանեկան ընթրիքը, հետո հայրը, ինչպես միշտ, որևէ պատմություն է պատմում զավակներին, վայելում է կնոջ հետ երեխաների խաղաղ քունը, և հանկարծ... պարզվում է, որ չորս կողմը հրդեհ է բռնկվել, և հարկ է որևէ կերպ հնարավորինս արագ փրկվել և փրկել ունեցվածքը. երեխաները փոքրահասակ են, պետք է արագ կողմնորոշվել...: Հայտնվում են մարդիկ՝ կին, տղամարդ, և մեծ արագությամբ օգնում են դուրս բերել երեխաներին և կարևոր իրերը, ու երբ Տիգրանի կինը զարմացած հարցնում է կանանցից մեկին, թե այս ինչ Սաստո շնորհ է, որ իրենց այսպես օգնում են, կինը պատասխանում է. «Ես իմ պարտքն եմ ուզում վճարեմ, քոմակըս որն ա: Դուք չէիք, որ իրեք տարուց առաջ ինձ մահիցն ազատեցիք: Դո՞ւք չէիք իմ երեխանցը հաց ու ջուր տալիս...», և զարգացնում է այս թեման [տե՛ս Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, ութ հատորով, չորրորդ հատոր, Երևան, 1947, էջ 113, այսուհետ բոլոր հղումները կտրվեն ըստ հոդվածի վերջում եղած գրականության ցանկի՝ շարադրանքում նշելով միայն ցանկի հերթական համարը և էջը]: Հեղինակը ոչնչով չի միջամտում, բայց և՛ երեխաները, և՛ ծնողները կատարում են առաջին եզրակացությունը լավություն, բարություն անելու և դրա արձագանքների մասին մի հետագա ապագայում... Այս նույն սկզբունքն է կիրառվում վեպի ամբողջ ընթացքում: Կամ, օրինակ, Տիգրանի ընկերը խնդրում է իր որդուն որոշ ժամանակ տիգրանենց տանը պահել, վերջինիս՝ երեխաների հետ շփվելու միջոցով փորձել վերադաստիարակել, և Տիգրանը սիրով համաձայնվում է: Երեխաների ուսուցիչը՝ պ. Կարապետը, իրեն ընդգծվածորեն անկիրթ պահող տղային՝ Ստեփանին, փորձում է բացատրել իրավիճակը, վերջինս անկառավարելի է. «Պատերը դողում էին՝ էնպես էր գոռում, ոտները գետնին տալիս:

«Ստեփան, հարցրեց պարոն Կարապետը, կուզե՞ս ինձ անկաջ անիլ, թե չէ»:

«Չէ՛, չէ՛, պատասխանեց...» ու էլի ոտները քարեքար տվեց, գոռաց:

«Շատ բարի, պատասխանեց պարոն Կարապետը, թե չես ուզում անկաջ անիլ, ես էլ հետո չեմ խոսալ, ինչ կուզես, արա »: Ասեց ու մեկ աթոռի վրա նստեց, գիրքն առավ ձեռն ու սկսեց կարդալ» [1, էջ 144]: Երկար գոռոռալուց հետո հոգնած տղան քնում է, նրան սիրով և զգուշությամբ անկողին են տանում, իսկ հաջորդ օրը արդեն ուսուցիչ և մանուկ «լեզու են գտնում» միմյանց հետ զրուցելով և եզրակացության են գալիս. Ստեփանը հասկանում է, որ անկառավարելի բարկությունը, անկրթությունը պախարակելի հատկություններ են:

Ամբողջ վեպը գիտամանկավարժական դասընթացի գործնական հիշեցնում է ձեռնարկ, որում վեր են հանվում չձևավորված մանուկի անձ դառնալու հիմնական կանոնները՝ կենցաղային կարգ ու կանոնի իմացություն, մարդկային հարաբերությունների ժամանակ ներկայանալի վարքագծի պահպանում, ավագ սերնդի և մանուկի փոխհարաբերության օրինակելի պահվածքի սահմանների ճանաչում, մարդու հոգեբանության դրականի և բացասականի սահմանազատում, նպատակների և երազանքների տարբերակման կարողության դաստիարակում և այլն, և այլն: Եվ այս ամենը՝ այսօր էլ մանկավարժության համակարգում նախընտրելի դիդակտիկ մեթոդների կիրառմամբ միայն:

Երբեմն իմացությունը ձեռք է բերվում հարց-պատասխան երկխոսության միջոցով (օրինակ՝ պ. Կարապետը երեխաների հետ պետք է անցնի հերթական աշխարհագրության դասը, և նա հարցերի միջոցով յուրաքանչյուր երեխայի հետ խաղարկում է քարտեզի ճանաչողությունը, հաջորդ պատասխանողը լրացնում է նախորդի բացթողումներն ու վրիպումները դարձյալ հարցերի միջոցով, և այսպես շարունակ), երբեմն՝ խաղճանաչողության (հայրն ու զավակները գնացել են իրենց մտերիմ ծանոթի տուն, և ծանոթանալով բարեկամի տնտեսությանը, աշխատանքի բաժանման համակարգին, այգու, բանջարանոցի մշակման սկզբունքներին, աշխատատիրոջ և աշխատողների աշխատանքային հարաբերություններին՝ երեխաները որոշում են և խնդրում իրենց հորը ամեն մեկին մի փոքրիկ հողակտոր տրամադրել, որպեսզի իրենք էլ մշակեն և փորձեն իրենց ուժերը այգեգործության և բանջարաբուծության ասպարեզում... բնականաբար, հայրը սիրով ընդառաջում է), երբեմն՝ սեփական փորձով (Ստեփանը ոչ լավ դաստիարակություն ստացած, անտեսված երեխա է, որ բնակվում է այս օրինակելի ընտանիքում, սկզբում նա ըմբոստ է, անկառավարելի, անկիրթ, յուրաքանչյուր առիթ օգտագործում է տհաճ իրավիճակ ստեղծելու համար, սակայն շրջապատի համբերատարությունը, հանդուրժողականությունը, բոլոր պարագաներում և իրավիճակներում նրան սիրով ընդունելը աստիճանաբար տղային դարձնում են դրական, համակրելի, ներկայանալի անձնավորություն), երբեմն նաև անհաջողության հասնելով (աղջիկը անփութության հետևանքով սպասքը վայր է գցում և ջարդում, մայրը չի նախատում, բայց հետո աղջկա հավաքած գումարով վերականգնում են վնասը), երբեմն էլ դիմացինի արարքների գնահատման միջոցով (Ստեփանը հայտնվել է իրենց տանը, խախտել և խախտում է իրենց տան հանգիստն ու խաղաղությունը, սկզբում երեխաները չեն կողմնորոշվում՝ ինչպես վարվել, սակայն հայրը, մայրն ու ուսուցիչը, թե՛ իրենց օրինակով, թե՛ առակախոսությամբ, թե՛ բաց տեքստով խրատելով, հասնում են ցանկալի հարաբերությունների հաստատմանը, և ընտանիքում կրկին տիրում է ներդաշնակությունը), երբեմն դաստիարակության ընթացքը՝ որպես խրատաբանություն, իրենց ձեռքն են վերցնում ծնողները (բաց տեքստով խրատների մեծ մասը բարձրաձայնում է Տիգրանը՝ ընտանիքի հայրը, և սա նույնպես կրթադաստիարակչական մոտեցման խիստ էական մոտեցման մասին է վկայում. իսկ և՛ ուսուցիչ Կարապետը, և՛ Աննան՝ երեխաների մայրը, և՛ բարեկամ մտերիմները հիմնականում խորհուրդ են տալիս, բացատրում են, օրինակ են ծառայում, իսկ Տիգրանը ավելի հաճախ իր հստակ խրատներն է տալիս. 19-րդ դարի ընտանեկան աստիճանակարգային (սուբորդինացիոն) համակարգը այս առումով դրսևորվում է նաև մանկան կրթադաստիարակչական տիրույթում և այսպես շարունակ:

Պատահական չէ, որ արժի մեկ անգամ ևս անդրադառնալ վեպի վերնագրին և այդ վերնագրի իմաստի մի նրբերանգին՝ որպես դաստիարակության համակարգի կարևոր բաղադրիչի. խոսքը խորհուրդ տալու և խրատելու միջև եղած տարբերությանն է վերաբերում. այս վեպի օրինակով կարող ենք ընդհանրացնել ու եզրակացնել, որ խրատելու իրավունք ունի նախ ավագը, բայց նաև այն ավագը, որն անվերապահ հեղինակություն է վայելում, որի խոսքը անբեկանելի է, որի տված խրատը անքննարկելի է ի սկզբանե, որին վստահում են շրջապատում բոլորը, և որն իրավունք ունի խրատելու: Խորհուրդը կարելի է տալ ընկերոջը, հավասարը՝ հավասարին թե՛ տարիքային առումով, թե՛ կարգավիճակով, թե՛ սուբորդինացիան խախտելով անգամ. խորհուրդը չի պարտադրում, խորհրդին դեմ կարելի է լինեն, այն կարելի է անտեսել, կարելի է նկատի ունենալ, այլ է խրատի պարագայում. խրատին հարկ է անսալ, խրատը չի քննարկվում, այն հանձնա-

րարվում է ի գիտություն, և շահում է նա, ով «ականջին օղ է անում» խրատը: Հենց այս իմաստով է մեծ մանկավարժ, լուսավորիչ Խ. Աբովյանը այս վեպը հանձնարարում որպես «խրատներ հայ մանուկներին»:

Ինչպես իրավացիորեն նշում է Ժան-ժակ Ռուսոն իր «Էմիլ, կամ դաստիարակության մասին» գրքում. «Դաստիարակությունը տրվում է մեզ կամ բնության կողմից կամ մարդկանց, կամ իրերի կողմից: Մեր ընդունակությունների և զգայարանների ներքին զարգացումը դաստիարակություն է, որ տրված է բնության կողմից, այդ զարգացմամբ ինչպես օգտվելու ուսուցումը մարդկանց կողմից դաստիարակությունն է, իսկ մեր սեփական փորձի հիման վրա առարկաների հետ շփվելու ունակություն ձեռք բերելը իրերի կողմից դաստիարակությունն է» [7, էջ 4]:

Գիտակրթական համակարգի գործող սկզբունքների կիրառման առումով ուշադրության արժանի է նաև մեկ այլ հանգամանք. չնայած վեպի վերնագրում շեշտվում է, որ այս պատմությունը հայ երեխաների համար խրատների ժողովածու է, սակայն ստեղծագործության ուսումնասիրությունը թույլ է տալիս կատարել մի այլ եզրակացություն ևս. լինելով մանուկներին ուղղված խրատներ՝ այս վեպի բոլոր դրվագները նաև մեծերի՝ ծնողների, ուսուցիչների, դաստիարակների համար խորհուրդների շտեմարան են, թե ինչ մեթոդներով, ինչ սկզբունքներով, ինչ գիտական և փորձնական միջոցներով է ավելի նախընտրելի, գերադասելի իրականացնել կրթությունն ու դաստիարակությունը: Իրավացի է Ա. Սողոյանը, երբ, հղում անելով մանկական գրականությանը զբաղվող հեղինակ Բարբարա Ուոլին, գրում է. «Մանկական գրականության պատումի տեսությանը նվիրված իր ուսումնասիրության մեջ գրականագետ Բարբարա Ուոլը մանկագրության համապատկերում հեղինակ-ընթերցող հարաբերության համար առանձնացնում է երեք հնարավոր դեպք:

Հեղինակը գրում է միայն երեխաների համար՝ հաշվի չառնելով հնարավոր մեծահասակ ընթերցողներին:

Հեղինակը կիրառում է երկակի հասցեագրում՝ իր ստեղծագործություններն ուղղելով հավասարապես և՛ մեծահասակներին, և՛ երեխաներին:

Հեղինակը ստեղծագործությունները բացահայտորեն հասցեագրում է երեխաներին՝ աչքի առաջ ունենալով նրանց «թիկունքից նայող ծնողներին» [8, էջ 35]:

Ընդունելով գրականագետի դիտարկումները պատումի առանձնահատկությունների վերհանման առումով [3, էջ 104]՝ հարկ ենք համարում կատարել մի էական դիտարկում այս վեպի «հասցեատերի» ճանաչման խնդրի շուրջ. վեպի հանգամանալից ուսումնասիրությունը այս հարցում անհրաժեշտ է դարձնում մի քանի հստակեցում. անշուշտ, այս վեպը գրված է մանուկների համար, որ վկայում է հենց վերնագրի երկրորդ մասը՝ «խրատներ հայ մանուկների համար», ապա՝ հեղինակն իրոք իր ստեղծագործությունը գրել է թե՛ մանուկների, թե՛ նրանց ծնողների համար հավասարապես ենթադրելով վերջիններիս ակտիվ ներկայությունը գավակների ընթերցանության ընթացքում (այս պարագայում կարելի է միացնել վերոնշյալ դասակարգման երկրորդ ու երրորդ բաժանումները), և նաև հեղինակը վեպը հասցեագրում է կրթության, դաստիարակության ոլորտում գործունեություն ծավալողներին որպես դասավանդման, գիտակրթական մշակույթի կազմակերպման օրինակելի սկզբունքների համակարգ: Այլ կերպ ասած՝ Խ. Աբովյանի «Պատմություն Տիգրանի կամ Բարոյական խրատներ հայ մանուկների համար» վեպը ոչ միայն գեղարվեստական ստեղծագործություն է, այլև մանկավարժական ուրույն ձեռնարկ, որն իր կրթամանկավարժական սկզբունքների ամբողջությամբ կիրառելի է առ այսօր և չի կորցրել իր արդիականությունը շուրջ երկու



դար շարունակ: Լուսավորչական ժամանակաշրջանի թե՛ փիլիսոփայությունը, թե՛ գեղարվեստական մտածողության բոլոր դրսևորումները՝ արվեստի տեսակների ողջ բազմազանությունը, թե՛ գիտամանկավարժական գրական, տեսական ժառանգությունը փորձում էր մարդկությանը հիմնավոր կերպով ներկայացնել կրթության, դաստիարակության ճակատագրորեն կարևոր լինելը քաղաքակրթության զարգացման տվյալ ժամանակի և ապագայի համար: Այս տեսանկյունով են ստեղծվել նաև Խ. Աբովյանի բոլոր մանկավարժական, գիտակրթական ուսումնասիրությունները, դասագրքերը, ինչպես նաև մեր քննության առարկա վեպ-տրակտատը:

**Եզրակացություն:** Մանկավարժության պատմության մեջ գիտակրթական համակարգերի տարաբնույթ փոփոխությունները, նորամուծությունները դաստիարակության ոլորտում միշտ էլ հիմնվում են այս ոլորտի անցյալի արժեքների փորձի վրա: Պատահական չէ, որ մինչև այսօր՝ 21-րդ դարը, ուսումնասիրության ուշագրավ նյութ են անցյալի նշանավոր փիլիսոփա-մանկավարժների՝ Սոկրատեսի, Պլատոնի, Արիստոտելի, Ռուսսոյի, Վոլտերի, Կանտի, Հեգելի և այլոց թողած գիտական աշխատությունները, մանկավարժական հայացքները, սկզբունքները, ի վերջո նաև մանկավարժական ժառանգությունը: Գիտնական-մանկավարժների այս փաղանգի մասն է նաև 19-րդ դարի հայ մեծ մանկավարժ, հայ նոր գրականության հիմնադիր, լուսավորիչ Խ. Աբովյանը, որի թողած գրական-գեղարվեստական հարուստ ժառանգության կողքին ոչ պակաս կարևոր և ուսումնասիրելի տիրույթ էլ կա. խոսքը վերաբերում է նրա մանկավարժական, կրթական աշխատություններին, որոնց շարքում իր ուրույն տեղն ունի «Պատմություն Տիգրանի կամ բարոյական խրատներ հայ մանուկների համար» վեպ-մանկավարժական տրակտատը, որի ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռում նորովի ընկալելու ու գնահատելու նաև գիտամանկավարժության ժամանակակից սկզբունքները և փորձարարական նորարարությունների համակարգը:

**SYSTEM OF PRINCIPLES IN EDUCATION AND LEARNING ACCORDING TO THE NOVEL  
“THE HISTORY OF TIGRAN OR MORAL LESSONS FOR ARMENIAN CHILDREN” BY KH.  
ABOVYAN**

**Bekmezyan Astghik**

*Ph.D. in Philology, Associate Professor  
Yerevan State University,  
Republic of Armenia  
a.bekmezyan@ysu.am*

**Summary**

The article explores the inheritance of past and contemporary teaching methods within the realm of education, focusing on vital educational issues in the emerging individual education system. Throughout the history of education, aspects such as moral norms, spiritual values, self-government mechanisms, family and social dynamics, aesthetic perception, and cultural worldviews have consistently commanded attention. It is emphasized that the value system of each historical period is primarily shaped by the scientific and aesthetic heritage of that era. Often, modern pedagogical approaches find their foundation in the experiences of the past. Kh. Abovyan's literary-pedagogical legacy, especially exemplified in "History of Tigran or Moral Lessons for Armenian Children," serves as the best evidence of the aforementioned statement. This 19th-century novel-treatise on pedagogy is a repository of unique scientific and pedagogical principles that remain relevant today, applicable to children, parents, and particularly educators as instructive guidelines for implementing educational systems. It provides a fresh perspective on contemporary scientific pedagogical principles and experimental innovations.

**Keywords:** *Education, pedagogical innovations, Khachatur Abovyan, novel-treatise pedagogy, edification and advice, material value, moral value, family subordination, personality formation.*

# СИСТЕМА ПРИНЦИПОВ ОБРАЗОВАНИЯ И ВОСПИТАНИЯ СОГЛАСНО РОМАНУ Х. АБОВЯНА «ИСТОРИЯ ТИГРАНА ИЛИ УРОКИ НРАВСТВЕННОСТИ ДЛЯ АРМЯНСКИХ ДЕТЕЙ»

**Бекмезян Астхик**

*Кандидат филологических наук, доцент,  
Ереванский государственный университет,  
Республика Армения  
a.bekmezyan@ysu.am*

## Аннотация

В статье рассматривается проблема наследования прошлого и современных методов преподавания важных вопросов в сфере образования, в частности в формирующейся системе индивидуального образования. В истории образования такие области, как пласты нравственных норм, формирование духовных ценностей, регулирование механизма самоуправления, семейно-социальная субординация, эстетическое восприятие, культурное мировосприятие, всегда находились в центре внимания. Подчеркивается тот факт, что система ценностей каждого цивилизационного периода в истории человечества в первую очередь формируется и обретает смысл через научно-эстетическое наследие данной эпохи. Зачастую педагогический опыт прошлого лежит в основе самых современных подходов современности. Одним из лучших примеров этого является Х. Абовян и его литературно-педагогическое наследие, в частности, его труд «История Тиграна или уроки нравственности для армянских детей». Данное произведение, являющееся по своему жанру романом, представляет собой сборник-хранилище уникальных научно-педагогических положений, написанных в XIX в., которые актуальны и по сей день и могут быть полезны как детям, так и родителям, и в частности педагогам, воспитателям-педагогам как инструктивные правила для применения в сфере образования. Изучение романа-педагогического трактата «История Тиграна или уроки нравственности для армянских детей» дает возможность по-новому воспринять и оценить принципы современной научной педагогики и систему экспериментальных инноваций.

**Ключевые слова:** образование, воспитание, педагогические новаторства, Х. Абовян, роман-трактат, наставление и совет, сочетание материальных и моральных ценностей, семейная субординация, формирование личности.

## Օգտագործված գրականության ցանկ

1. Աբովյան Խ., Երկերի լիակատար ժողովածու, ութ հատորով, հ. 4, Ե., 1947:
2. Բորև Յուրի, Գեղագիտություն, Ե., 1982:
3. Սողոյան Ա., Խաչատուր Աբովյանի պատումի արվեստը, Ե., 2022:
4. Սուրիալյան Ա. Մ., Հայոց լեզվի հոմանիշների բառարան, Ե., 1967:
5. Ուելլեր Ռոնե, Ուորրեն Օսթին, Գրականության տեսություն, Ե., 2008:
6. Платон, Сочинения в трех томах, том 3, часть 1, М., 1971:
7. Руссо Жан-Жак, Избранные сочинения [Эмил, или о воспитании], М., 1961
8. Wall B., The Narator's Voice, The Dilema of Children's Fiction, New York, 1991:

*Получено: 08.02.2024*

*Received: 08.02.2024*

*Рассмотрено: 01.03.2024*

*Reviewed: 01.03.2024*

*Принято: 23.04.2024*

*Accepted: 23.04.2024*



© The Author(s) 2024

This work is licensed under a Creative Commons Attribution-Non Commercial 4.0 International License